

րուն, ով որ ալ ըլլան:

«Երկրորդ.— Անոնք (հայերը) պիտի ունենան ազատութիւն ամէն ատեն անցնելու եւ վերստին անցնելու՝ ետ ու դարձի ատեն ի Հնդկաստան՝ Ընկերութեան նաւերէն որեւէ մէկին վրայ, որեւէ ազատ մարդու տրուած նպաստաւոր պայմաններով:

«Երրորդ.— Անոնք ազատութիւն պիտի ունենան ապրելու Ընկերութեան որեւէ քաղաքին, պահականոցներուն, կամ Հնդկական քաղաքներուն մէջ եւ դնելու, ծախելու, կամ վաճառ առնելու դետին կամ տուներ, եւ կարող ըլլալու են բոլոր քաղաքային պաշտօններու առջև նախադասութիւն ունենալու իրր թէ Անգլիական ծնունդ ըլլային, եւ պիտի ունենան միշտ ազատ եւ անարգել ազատութիւնը իրենց կրօնքին գործադրութեանց մէջ: Եւ մենք աստ կը յայտարարենք թէ մենք չպիտի չարունակենք (ի պաշտօնէ պահել) որեւէ կառավարիչ մեր ծառայութեան մէջ, որ որեւէ կերպով զանոնք (հայերը) անհանգիստ ընէ կամ զրկէ զանոնք կատարեալ վայելումէն աստ անոնց շնորհուած իրաւունքներէն, եւ ոչ ալ անոնք պիտի վճարեն որեւէ ուրիշ կամ աւելի մեծ մաքս Հնդկաստանի մէջ, քան ինչ որ կը վճարեն ընկերութեան գործակատարները, կամ որեւէ ուրիշ Անգլիացի ծնած կուտայ, կամ պէտք է որ տայ:

«Չորրորդ.— Անոնք կրնան ճամբորդել Ընկերութեան որեւէ մէկ պահականոցէն դէպի Հնդկաստանի որեւէ նաւահանգիստը կամ վայրը, կամ Հարաւային Ծովերը, Չինաստան կամ թէ Մանիլաները, Ընկերութեան որեւէ մէկ նաւին մէջ, կամ Ընկերութեան թոյլատրուած որեւէ տրամադրելի ազատ նաւու մէջ եւ ազատութիւն ունենալ առեւտուր ընելու Չինաստանի, Մանիլաները կամ որեւէ ուրիշ նաւահանգիստներ ու վայրեր Ընկերութեան սահմաններուն մէջ, հաւասար իրաւունքներով, մաքսերով եւ բեռագրիներով որեւէ ազատ Անգլիացիի հետ»:

Մինչ Անգլիոյ մէջ ամէն մարդ ձոյլի (ուկի կամ արծաթ) արտածման համար կը վճարէր հարիւրին երկուք, բեռագրիի եւ թոյլատրութեան համար, եւ երեք առ հարիւր աղա-

մանդներու եւ ուրիշ գոհարներու համար, որ այստեղ կը յայտարարուի, որ հայերը պիտի վճարեն հարիւրին երեք ձոյլ (մետաղ, արծաթ կամ ոսկի) արտածման համար եւ հարիւրին երկու (Անգլիա) աղամանդի ներարծման համար, բուստի եւ սաթայուլունքներու համար հարիւրին վեց, բեռագրիի եւ թոյլտուութեան համար եւ բուստի, սաթի, հում միջատակարմիրի, սնդիկի, սրաչեղրի, ամէն տեսակ հրազեններու, հազուատներու, ամէն տեսակ գործըւած կամ չգործուած երկաթի, թուղթի, ամէն տեսակ զրանիւթերու, Անգլիական հայելիի կամ խմելու ապակեղէններու եւ ամէն տեսակ նուրիմպէրիկեան առարկաներու եւ ապրանքներու տասը առ հարիւր՝ թոյլտուութեան համար եւ թօնին վեց փառնտ (Անգլիական ոսկի) բեռագրիի համար:

«Ամէն տեսակ կաշեղէն եւ վենետիկեան իրեր ու ապրանքներ կարելի է դրկել առանց թոյլտուութեան, վճարելով միայն վեց փառնտ իւրաքանչիւր թրնի: Բոլոր կերպաներու կամ բրգեղէն արտադրութեանց, ինչ տեսակէ ալ ըլլան, հայերը կը վճարեն հարիւրին տասներկուք ու կէս, ինչ պահանջ ալ որ ըլլայ, բացի ապրանքատարութեան եւ Ընկերութեան շընդկաստանի մաքսատանց մէջ: Կապարի համար՝ հարիւրին տասը, արտօնութեան համար եւ թրնին երեք փառնտ բեռագրի: Ուտելու եւ խմելու ամէն տեսակ պաշարի համար՝ թրնին վեց փառնտ բեռագրի, բայց ոչ արտօնութեան (սակ): Եւ վերադարձի (դէպի տուն, Անգլիա) ամէն տեսակ ապրանքներու համար հետեւեալ կերպով պիտի վճարեն.— աղամանդներու, մարգարիտներու, շարիւղաներու, ամէն տեսակ գոհարներու եւ սաթի՝ հարիւրին երկու, նաւոզէքի եւ արտօնութեան համար, ինչպէս որ նախապէս ըսուեցաւ: Որեւէ տեսակ մուշկի համար՝ հարիւրին վեց նաւոզէք եւ արտօնութեան համար նաւոզէքէ անշատ: Պարսկաստանի ամէն տեսակ հում մետաքսի համար՝ բեռագրի քսան եւ մէկ փառնտ թրնին, բայց ոչ արտօնութեան, մաքսի կամ որեւէ ուրիշ վճարում, բացի հարիւրին երկուք ու կէսէ, մեր նաւերուն ժամանականց պահուելուն համար: